

Հարգելի՛ աշակերտներ, ինչու չէ, և ծնողներ, ես կփորձեմ շարադրել իմ կարծիքը դաստիարակության, ուսուցման, աշակերտ - ուսուցիչ և ծնող - ուսուցիչ հարաբերությունների վերաբերյալ: Երբ ընտանիքում ծնվում է երեխա, մեծ ուրախություն է յուրաքանչյուր մարդու համար, բայց ոչ բոլոր ծնողներն են պատկերացնում, որ երեխայի ծնունդով մեզ վրա ինչ-ինչ պատասխանատվություն է դրվում բնության կողմից: Փորձենք համեմատել, որ հասկանալի լինի. եթե փոս ես փորում, որ ծառ տնկես, պտուղ ստանաս, որով պետք է սնվի մարդը , և եթե չջրես այդ ծառը, ապա այդ փոսում փուշ ու տատասկ կբուսնի: Իհարկե, մեր մեծերը, երբ ասում էին՝ երեխային հատուկ չեն դաստիարակում, նա ինչ տեսնում է ընտանիքում, այն էլ սովորում է, իրոք այդպես է: Եթե պրոեկցիա անենք 21- դարը, կստանանք, որ ինտերնետ տեղեկատվության 80-90%-ն է աղբ , վարկանիշի հետևից վա

զող կիսագրագետ բլոգերների՝ 90-95 տոկոսը: Վերադառնանք մեր մայրերին , իրոք, նրանք օջախի պահապաններն են, բայց այսօր պետք են մայրեր, որ մտածեն ոչ միայն սերնդի ֆիզիկական պահպանության մասին, այլ նաև գյուղին, շրջանին և աշխարհին պիտանի մարդ կերտելու մասին: Չենք խոսում ուսուցիչների, դասախոսների, պաշտոնյաների մասին. նրանք մեր ընտանիքի անդամներն են:

Ուսուցիչ- աշակերտ հարաբերությունների մասին:

Ես զարմացա, երբ իմացա, որ ծնողները բողոքում են, երբ ուսուցիչները պարտադրում են երեխաներին ինչ- որ հանրային գործ անել: Հնարավոր է , որ իմ ուղեղը քարացել է, և ես մնացել եմ 20-րդ դարում , բայց մի բան, որ երեխան մինչև 18 տարեկան դառնալը անչափահաս է և հիմնական ուղերձները ստանում է մեծերից, հիմնականում ծնողներից, ովքեր այսօր, առավել քան երբևէ, պետք է լինեն կատարյալ: Բայց այսօր ունենք հեռախոսները ականջներին կպցրած մայրեր, թափառող երեխաներ, գյուղում ապրող, բայց կով ու ոչխար չունեցող գյուղացիներ և ամեն ինչից դժգոհող տատիկներ ու պապիկներ: Ինձ թվում է, որ մենք մոռացել ենք, թե ինչի շնորհիվ է, որ, չունենալով պետականություն հարյուրավոր տարիներ, մեր ժողովուրդը իր աշխատասիրության շնորհիվ գոյատևեց: Ամեն ինչի հիմքը աշխատասիրությունն է: Չլինելով աշխատասեր՝ մենք էվոլյուցիայի հետ վերադառնում ենք դեպի կենդանական աշխարհ:

Ծնող - ուսուցիչ հարաբերությունը պետք է լինի անհատական և հիմնականում՝ դպրոցի հոգեբանի մասնակցությամբ ձևավորված: Եվ մենք՝ ծնողներս, պետք է հասկանանք, որ մեր երեխաները ինչպիսին էլ լինեն, միևնույն է, մեր երեխաներն են, ամենավատագույն դեպքում ամոթից էլ մեզ կթաղեն, իսկ պետության համար ոչ պրոֆեսիոնալ ինժեները, կաշառք վերցնող դատախազը, անկարգապահ ոստիկանը դժբախտություն են և ժամանակի ընթացքում պետականության կորստին նպաստող: Իսկ երբ մենք ասում ենք ուսուցիչ , նկատի ունենք մի մարդու, որն ունի հոգևոր արժեքներ և ամեն ինչ անում է, որպեսզի դաստիարակի պետականամետ և աշխատասեր մարդկանց: Հարգելի՛ երեխաներ և ծնողներ , հուսանք, որ մեր ուսուցիչները այդպիսին են, և եկեք չխառնվենք նրանց գործին և թողնենք, որ իրենք զբաղվեն իրենց գործով: Տանը մենք շատ ժամանակ ունենք մեր տեսակետը առաջարկելու, միգուցե մի 10 տարի հետո կկատարվեն

փոփոխություններ մեր պահպանողական, ամեն ինչ իմացող, բայց ոչ մի բան
մինչև վերջ չտանող հասարակությունում:

Հակոբ Սարիբեկյան
Վերին Գետաշեն